

ՀՏԴ՝ 821.111

DOI:10.52971/18294316-2023.26.1-203

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄԸ
ՔԵՐՈՂ ԷԴԳԱՐՅԱՆԻ «ԵՓՐԱՏԻ ՄԱԿԸՆԹԱՅՈՒԹՅՈՒՆԸ» ՎԵՊՈՒՄ

Նեյի Բ. Գալստյան

ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Անփոփում

Նախաբան. Ամերիկահայ անգլիագիր Քերոլ Էդգարյանն իր գրչակիցների հետևողականությամբ ամերիկահայության առջև ծառայած բազում դժվարությունները, հոգեբանական խնդիրները հաղթահարելու, ինքնությունը պահպանելու նպատակով դիմել է սերնդեսերունդ փոխանցված ավանդույթների, սովորույթների, կենսափորձի, վարքուբարքի, հավատալիքների, ազգը շարունակաբար վերածնող, վերաիմաստավորող, վերականգնող էթնիկ հիշողությանը: Մեթոդներ և նյութեր. Հոդվածում կիրառվել են պատմահամեմատական, կառուցվածքային-տիպաբանական մեթոդները, գրական երկերի վերլուծության համակարգային և ամբողջական վերլուծության սկզբունքը, օգտագործվել գրականագիտության ինչպես նախորդ շրջանների ուսանելի փորձը, այնպես էլ ժամանակակից ուսումնասիրություններն ու ձեռքբերումները: Վերլուծություն. «Եփրատի մակընթացությունը» վեպի հիմքում Քերոլ Էդգարյանը դրել է ազգային ինքնության պահպանման խնդիրը, ներկայացրել սերնդափոխությամբ պայմանավորված իրադրությունը, նորոյա կյանքն իր խնդիրներով, մարդկային բարոյություններով, երրորդ սերնդի՝ բարդ ու հակասական, հոգեբանական երկվություններով լի ինքնաճանաչման ուղին, ինքնությունը պահպանելու մաքառումները, աշխարհասփյուռ հայությանը ազգային ոգով, հայրենասիրությամբ տոգորող, համազգային գերխնդիրները լուծելու, Հայոց եղեռնի փաստը համաշխարհային հանրությանը ճանաչել տալու, հայոց ցեղասպանության դատապարտման՝ աշխարհի արդար դատավճռին հասնելու ջանքերը, երրորդ սերնդի վերադարձը դեպի ազգային արմատները: Արդյունքներ. Քերոլ Էդգարյանը «Եփրատի մակընթացությունը» վեպում ազգային ինքնության պահպանումը կարևորվում է էթնիկական հիշողությամբ, հայ ավանդական ընտանիքի ստեղծմամբ և պահ-

պանմամբ: Քերոլ Էդգարյանը ամերիկահայ անգլիագիր գրողներ Մայքլ Արլեն Կրտսերի, Փիթեր Բալաքյանի, Փիթեր Սուրյանի նման, անդրադառնալով ազգային ինքնության պահպանման թեմային, իր ներդրումն ունեցավ ազգային ինքնության պահպանման գործում, նպաստեց ցեղասպանության դատապարտմանը, որի վառ վկայությունը ԱՄՆ-ի Հայագիտական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ընկերակցության (NAASR) հովանավորությամբ Մեծ եղեռնի հարյուրամյա տարելիցին վեպի երկրորդ վերամշակված տարբերակի հրատարակումն էր:

Բանալի բառեր՝ *ազգային ինքնություն, ազգային արմատներ, երրորդ սերունդ, ժամանակի պարտադրանք, ամերիկահայ անգլիագիր գրողներ, մաքառումներ, տեղահանություն, կարոտ, ներաշխարհ, գոյափոխություն, ցեղասպանության ճանաչում:*

Ինչպես հղել՝ Գալստյան Ն., Ազգային ինքնության պահպանման դրսևորումը Քերոլ Էդգարյանի «Եփրատի մակընթացությունը» վեպում//ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1(26): 203-211 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.1-203

THE MANIFESTATION OF NATIONAL IDENTITY PRESERVATION IN CAROL EDGARIAN'S NOVEL "RISE THE EUPHTATES "

Nelli B. Galstyan

Institute of Literature after M. Abeghyan of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: American-Armenian English-speaking writer Carol Edgarian, following the example of her fellow writers, overcoming many difficulties and psychological problems of American Armenians, in order to preserve national identity, turned from generation to generation to traditions, customs, life experience, customs, ethnic memory, which continuously reviving and restoring the nation. **Methods and materials:** We have used historical-comparative, structural-typological methods, the principle of consistency and completeness of the analysis of literary works, used the instructive experience of previous periods of literary criticism, as well as modern research and achievements. **Analysis:** In the novel "Rise of the Euphrates", Carol Edgarian showed the problem of preserving national identity, presenting the situation caused by the change of generations, modern life with its problems, with human complexities, the path of self-knowledge of the third generation, complex and contradictory, full of psychological dilemmas, the struggle to preserve national identity the spirit of the Armenians of the whole world, imbued with patriotism, efforts to solve national super problems, recognizing the fact of the Armenian Genocide before the world community, condemned the Armenian Genocide, achieved a just peace verdict, the return of the third generation to its national roots. **Results:** In the novel " Rise the Euphtates ", Carol Edgarian reinforces the preservation of national identity with ethnic memory, the creation and preservation of the traditional Armenian family. Carol Edgarian, as an American English-speaking writer, according to the example of M. Arlen Mladshago, P. Balakyana, P. Suryana addressed the topic of preservation of national identity, and showed interna problems, and also made a big contribution to preservation of national identity, contributed to the condemnation of the Armenian genocide. The witness is the National Center for Armenian Studies and Studies in

the United States (NAASR), which published the second reworked version of the novel for the centenary of the genocide.

Key words: *national identity, national roots, third generation, time constrain, American-Armenian English-language writers, struggl's, eviction, longing, inner world, existentialism, genocide recognition.*

Citation: Galstyan N. The Manifestation of National Identity Preservation in Carol Edgarian's Novel "Rise the Euphtates " // 'Scientific Works' of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 1(26). 203-211 pp., DOI: 10.52971/18294316-2023.26.1-203

ПРОЯВЛЕНИЕ СОХРАНЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В РОМАНЕ КЭРОЛ ЭДГАРИАН "ВОЗВЫШЕНИЕ ЕВФРАТА"

Нелли Б. Галстян

Институт литературы имени М. Абебяна НАН, Ереван, РА

Аннотация

Введение: Американо-армянская англоязычная писательница Кэрол Эдгарян, по примеру своих коллег-писателей, преодолевая многие трудности и психологические проблемы американских армян, с целью сохранения национальной идентичности, обращалась из поколения в поколение к традициям, передающимся обычаям, жизненному опыту, нравам, этнической памяти, которая непрерывно возрождала и восстанавливала нацию [5, с. 5]. **Методы и материалы:** В статье применялись историко-сравнительный, структурно-типологический методы, принцип системности и полноты анализа литературных произведений, использовались поучительный опыт предшествующих периодов литературоведения, а также современные исследования и достижения. **Анализ:** В романе «Возвышение Евфрата» Кэрол Эдгарян показала проблему сохранения национальной идентичности, представила ситуацию, вызванную сменой поколений, современную жизнь с ее проблемами, с человеческими сложностями, путь самопознания третьего поколения, сложными и противоречивыми, полными психологическими дилеммами борьбу, за сохранение идентичности, национального духа армян всего мира, проникнутую патриотизмом, усилием по решению национальных сверхпроблем, по признанию факта Геноцида армян мировым сообществом, осудила Геноцид армян, добилась справедливого вердикта мира, возвращения третьего поколения к национальным корням. **Результаты:** В романе «Возвышение Евфрата» Кэрол Эдгарян подкрепляет сохранение национальной идентичности этнической памятью, созданием и сохранением традиционной армянской семьи. Кэрол Эдгарян по примеру американо-армянских англоязычных писателей М. Арлен Младшего, П. Балакяна, П. Сурьяна, обратилась к теме сохранения национальной идентичности, и показала внутренние проблемы, а так же внесла большой вклад в сохранение национальной идентичности, способствовала осуждению геноцида армян. Свидетельством является Национальный центр арменоведческих исследований и исследований в США (NAASR), который опубликовал вторую переработанную версию романа к столетию годовщины геноцида.

Ключевые слова: *национальная идентичность, национальные корни, третье поколение, временная обязанность, американо-армянские англоязычные писатели, борьба, выселение, тоска, внутренний мир, экзистенциализм, признание геноцида.*

Как цитировать: Галстян Н. Проявление сохранения национальной идентичности в романе Кэрол Эдгариан "Возвышение Евфрата" "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 1(26), 203-211 сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-203

ՆԱԽԱԲԱՆ. 20-րդ դարի վաթսուհակնյակ թվականներից սկսած՝ օտարագիր գրականության մեջ միտում է նկատվում դեպի ազգային արմատներ խնդրի շուրջ: Ինքնակենսագրական գեղարվեստական ստեղծագործություններով Քերոլ Էդգարյանը «Եփրատի մակընթացությունը» ("Rise the Euphrates", 1994), վեպով փորձեց ճակատագրի բերումով, ժամանակի պարտադրանքով ազգայինից հեռացածներին վերադարձնել ազգային արմատներին:

Հոդվածի նպատակն է Քերոլ Էդգարյանի արձակ ստեղծագործության ուսումնասիրությամբ բացահայտել և արժևորել ազգային ինքնության թեման՝ իր դրսևորումներով:

Ներկա ժամանակներում աշխարհասփյուռ հայության առջև ծառայած նորոյա մարտահրավերների, լինելության բարդ իրավիճակների պայմաններում թեման առավել, քան երբևէ, հրատապ է և ունի արդիական հնչողություն:

Քերոլ Էդգարյանն իր ստեղծագործությամբ հին աշխարհը ներկայացնում է նոր ձևով՝ իր հարաշարժության ու գաղտնագրության մեջ, և ընդգծում է, որ սերունդները ազգային ինքնությունը պահպանելու համար պետք է միմյանց փոխանցեն իրենց ազգի պատմությունը, ազգային կեցվածքն ու մտածողությունը և տեր կանգնեն իրենց արյան շիթերով հասած հոգևոր հարստությանն ու պատմությանը, այլապես ազգը չի կարող հարատևել:

Քերոլ Էդգարյանը Փիթեր Սուրյանի և Մայքլ Արլեն Կրտսերի նման պատկանում է Մեծ եղեռնի երրորդ սերնդին: Հեղինակ է գրական մրցանակների արժանացած երեք վեպերի՝ «Եփրատի մակընթացությունը» ("Rise the Euphrates", 1994), «Հրաշքի երեք փուլերը» ("Three Stages of Amazement", 2011), «Վերա» ("Vera", 2021), էսսեների, պատմվածքների: Քերոլ Էդգարյանը «Եփրատի մակընթացությունը» վեպում պատկերել է իր սերնդակիցների վերադարձը ազգային արմատներին:

«Եփրատի մակընթացությունը» վեպը լույս է տեսել 1994 թվականին և արժանացել է ՀԱԿ-ի ազատության մրցանակին:

Գիրքը երեք սերունդների՝ Քազարդ տատիկի, նրա դուստր Արաքսիի և թոռնուհի Սեդայի պատմությունն է, որում առաջին սերունդը տառապում է, երկրորդը՝ մոռանում իր ազգային ինքնությունը, իսկ երրորդ սերունդը՝ վերագտնում է այն:

«Յուրաքանչյուր կնոջ դիմագրաված պայքարը, – գրում է ամերիկացի գրաքննադատ Դ. Լ. Փլուշարսը, – ցույց է տալիս 1915 թվականին երիտթուրքերի ձեռքով տեղի ունեցած Հայոց ցեղասպանության մնայուն հետևանքները: Ե՛վ Էդգարյանի ստեղծագործության, և՛ հայ-ամերիկյան գրականության հիմնական թեման ցեղասպանությունը, կորցրած ինքնությունը և անցյալի կյանքն այսօրվա Ամերիկայում հաշտեցնելու կարողությունն է» [4, էջ 358]:

Մեղա Լուսն, որ ինքը գրողն է՝ վեպի քնարական պատմողը, որի հետ մայրն ու տատը կապում են իրենց ցավն ու հույսը, ափսոսանքն ու երազանքները, պետք է ի վեր-

ջո հավասարակշռի իր հայկական և ամերիկյան ինքնությունները՝ մարելով թե՛ մոր, թե՛ տատիկի առաջ իր «պարտքերը»: Երկու կանանց դաժան պայքարի կենտրոնում Արաքսիի դուստր Սեդան է:

«Դուստրն իր վրա է վերցնում այն, ինչ կիսատ է մնացել մոր կյանքում» [4, էջ 6], - ասում է Սեդան: Իր ողջ կյանքում նա հետամուտ է լինում անպատասխան հարցերի բացահայտմանը: Չափահաս դառնալով՝ հերոսուհին փորձում է բացահայտել իր ազգային ինքնության գաղտնիքը:

Վեպը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում Քերոլ Էդգարյանը պատկերում է Եդեոնը, Կարոտ-Քազարդի ողիսական ուղին Խարբերդից Էլիս: Նատուրալիստական խիտ գույներով հեղինակը բացում է տարագրության արհավիրքը, կանանց գոհաբերումը և մարդկային դիմակայությունը, երեխաներին փրկելու՝ աստծո կողմից ստացված առաջադրությունը: Երկրորդ մասում պատկերված են Քազարդի ամերիկյան կյանքը, հային սպառնացող ուժացումը, մայր-դուստր հակամարտությունը, հայ ընտանիքը պահելու հերոսուհու ճիգերը, երրորդ մասում՝ եդեոնի երրորդ սերնդի՝ հանձին թոռնուհի Սեդայի՝ ազգային արմատներին վերադարձը:

Քերոլ Էդգարյանը միտումնավոր վեպի հերոսներ է դարձրել երեք սերնդի կանանց, որոնց շուրջն էլ ծավալվում է ողջ գործողությունը, և դա ունի իր պարզ բացատրությունը, ինչպես իրավացիորեն նշում է Ս. Դանիելյանը. «Կի՛նն է խորհրդանշում ժողովրդի յարատևությունը, կի՛նն է իր վրայ վերցնում ճանապարհի սկզբի եւ ընթացքի յորձանքը» [1, էջ 200]:

Վեպի հիմքում ընկած է Քազարդի փոթորկուն ներաշխարհը: Դժվար չէ նկատել՝ Քերոլ Էդգարյանը վեպում պարզորոշ դրսևորում է ներապրումի գրական-փիլիսոփայական հակվածություն: Գրողի համար անհատը (այստեղ՝ հերոսուհին) գեղարվեստական իրականության մեջ նվաճում է ներաշխարհի բացահատման իրավունք: Գրողը շեշտը դնում է մարդու ներաշխարհի վերհանման և բացահայտման վրա: Սխալ կլինի կարծել, թե գրողն անտեսում է արտաքին հանգամանքը: Նա այն ծառայեցնում է ներքինին: «Արտաքինի իջեցումը ներքին մակարդակ, - գրում է գրականագետ Հ. Էդոյանը, - XX դարի արվեստի գլխավոր գիծն է, նրա կառուցվածքային հիմքը: Ներքին մակարդակի բարձրացումը արտաքին պլան նշանակում է գեղարվեստական ինֆորմացիայի զարգացում իր ուղղահայաց կառուցվածքի մեջ (վերնից դեպի ներքև, մակերեսից դեպի խորքը), իմաստային կողմի մեծացում, բացահայտումն այնպիսի իրականության, որը մինչ այդ անձանոթ էր արվեստին» [2, էջ 6-7]:

Որպես ազատ ստեղծագործող՝ Քերոլ Էդգարյանը ելնում է մարդ-հասարակություն բարոյական ծալքերի զարգացման անհրաժեշտությունից: Այսպես. Սեդան կարողանում է անցյալի շղարշից վեր հանել տատի՝ ողբերգություններով լի կյանքը, անմարդկային սարսափների միջով անցած նրա ուղին: Եդեոնը վերապրած տասնամյա հերոսուհին հոգեկան ծանր ցնցումներից մոռանում է իր անունը և պարտադրված կրում նոր անուն. ֆրանսիական միանձնուհիները նրան անվանում են Կաֆարո, որը ֆրանսերեն նշանակում է «հոգու մելամաղձություն», սա դեռ ամենը չէ, Էլիս կղզում ներգաղթը կազմակերպող աշխատակիցները նրան կոչում են Քազարդ, յուրաքանչյուր

օտար անուն հոգեպես ճնշում է հերոսուհուն, ստիպում համակերպվել նոր իրավիճակներին, մոռանալ տալ անցյալը, ազգությունը: Հերոսուհին կոտորվողներից չէ: Նրա ուսերին է դրված հայ մնալու պատասխանատվությունը:

Թվում է՝ Ամերիկա գալով, ավանդապաշտ հայ ընտանիք ստեղծելով, հայոց լեզվի և Հայ առաքելական եկեղեցու միջոցով պահպանելով հայրենի երկրի ավանդույթները, ազգային ինքնության զգացումը, կիսադադլի փոթորկուն ներաշխարհը, սակայն անցյալը չար երազի պես անընդհատ հետապնդում է նրան, որից ինքը շարունակ փորձում է ձերբազատվել: Հարելով գոյափիլիսոփայական գրական ուղղությանը՝ Լ.-Ջ. Սյուրմեյանի, Փ. Սուրյանի, Վ. Սարոյանի նման Ք. Էդգարյանը ուշադրությունը սևեռում է բացարձակ ճշմարտության բացակայության պայմաններում ընտրություն կատարելու, որոշումներ և պարտավորություններ ընդունելու դժվարության վրա, մարդու գոյությունը տեսնում որպես կյանքի իմաստի որոնման և ինքնահաստատման ընթացք: Արձակագրուհու հերոսը, չնայած կյանքի անհեթեթությանը և անիմաստությանը, չի կորցնում մարդ լինելու իր կոչումը, դիմակայում է բոլոր դժվարություններին, տանում անարդար աշխարհի բարոյական ողջ ծանրությունը, իր ուսերին առնում աշխարհում եղած ներուժի պահպանումն ու շարունակությունը: Սարտրյան կեցություն-ոչնչություն-գիտակցություն առանցքը, տրոհվելով ու տարրալուծվելով ստեղծագործության ներքին շերտերում, մեկնական հետևողական հունով Ք. Էդգարյանին հանգեցնում է դեպի «գիտակցությունը՝ որպես բարոյական կեցություն», հայեցողությանը:

Ողջ կյանքում հերոսուհին փափագում է իր հայրենի երկիրը, որն այլևս գոյություն չունի, Սարոյանի հերոսների նման ստեղծում է հայկական ջերմ և տաքուկ բնօրրան՝ մի փոքրիկ Հայաստան: «Տատիկս սկսում և ավարտում էր իր օրերը խոհանոցում, - վկայում է թոռնուհի Սեդան, - իր սեփական տանը կամ եկեղեցում, սրանք այն վայրերն էին, որտեղ նա իրեն զգում էր իր հարազատ հողի վրա, նա ստեղծել էր իր հայկական անկյունը» [4, էջ 61]:

Ի տարբերություն Փ. Նաջարյանի «Հիշողության դուստրերը» վեպի տարեց հերոսուհիներից մեկի, որը հիվանդագին անտարբերություն է դրսևորում անցյալի նկատմամբ, պատրաստ է հանուն իր զավակի երջանկության և բարեկեցիկ կյանքի մոռացության տալ անցյալը, ազգային հիշողությունը, անգամ առանց վարանելու կարող է ձուլվել, Քազարդը չի ընդունում ամերիկյան բարքերը, սովորույթները, բարոյական ըմբռնումները, հաղթահարում է բոլոր դիմակայությունները, ջանում պահպանել իր ընտանիքի ազգային ինքնությունը, դստերը՝ Արաքսիին փորձում է ազգային ոգով մեծացնել՝ հեռու պահելով ամերիկացումից: Սակայն դա նրան չի հաջողվում. հոգս են ցնդում երագներն ու ցանկությունները: Դուստրը, որ ծնվել ու մեծացել է Ամերիկայում, ընդունում է ամերիկյան բարքերն ու սովորույթները, առաջնորդվում է տեղի բարոյական նորմերով և օտար արժեքներով: Նրա համար անհասկանալի է «ազգ» հասկացությունը, առաջնային են մարդկային արժեքները: «Ամերիկա ժամանելուց հետո յոթանասուն տարի անց, - վկայում է Սեդա Լուն, - Քազարդը վիճում էր գեղեցիկ, ըմբոստ Արաքսիի հետ, ով չէր ուզում անդրադառնալ իր սարսափելի անցյալին, ուզում էր ապրել դյուրիշ կյանքով և տեսնել աշխարհը» [4, տե՛ս ներածություն]:

Ք. Էդգարյանը, Մ. Ա. Կրտսերի, Փ. Բալաքյանի, Փ. Նաջարյանի, Փ. Սուրյանի հետևողականությամբ, ցույց է տալիս օտար միջավայրում հարազատ հողից կտրված հայ մարդու ազգային արմատներից օտարվելը: Արաքսին, հակադրվելով մորը, ամուսնանում է օտարազգի Ջորջ Լունի հետ: Ըմբոստացող հերոսուհին այս անգամ էլ չի կոտորվում, Ալբեր Քամյուի Միգիփոսի («Միգիփոսի առասպելը» “Le Mythe de Sisyphe” 1942) նման համառորեն ընդվզում է անհեթեթ և անիմաստ կյանքի դեմ: Ի տարբերություն ֆրանսիացի գրողի հերոսի, որը դատապարտված է նույն աշխատանքը շարունակ անիմաստ կատարելուն, Էդգարյանի հերոսուհին հասնում է իր նպատակակետին. թոռնուհի Սեդայի հետ կապելով իր հույսը, նրան համարելով իր ժառանգորդը, իր անցյալի պատմության կրողը, ազգը շարունակողը՝ հետևողականորեն նրան հասցնում է ազգային ինքնության պահպանման սահմանագծին:

Սեդան ստանձնում է տատիկի իսկական անունը գտնելու պարտավորությունը, որը նրան մղում է իր ազգային ինքնության բացահայտմանը: Դա առաքելություն էր՝ որոնելու հայկական արմատները: «Հայր, – ասում է Սեդան, – երկրի վրա առաջին քրիստոնյա ազգն է, մի ազգ, որի երկրում Աստված ինքն էր տեղավորել Նոյի տապանը: Իմ մեջ լեռն Արարատն է, պոետների երգերն են և յուրաքանչյուր սպանված հայի հոգին» [4, տե'ս ներածություն]:

Արարատ լեռը հերոսուհի Սեդայի համար ազգային ինքնությունը վերագտնելու, վերահաստատվելու խորհուրդն ունի: Քազարդից Սեդային է փոխանցվել լավատեսությունը, ապագայի նկատմամբ հավատը, որը նրան մղում է գտնելու և պահպանելու ազգային ինքնությունը: «Ես համակ ուշադրությամբ եմ լսում Քազարդին, ով ասում է՝ նոր կյանք ստեղծիր, դու պետք է ապագայի մասին հուսաս, դու պետք է հիշես՝ ինչ է եղել» [4, էջ 5]: Անցյալի դառը հիշողությունը հերոսուհին արյամբ փոխանցել է թոռնուհուն: Ինչպես իրավացիորեն նկատել է Տ. Մալումյանը. «Ցեղասպանության ականատեսների ժառանգները, որպես կանոն, չեն կարողանում սթափ գնահատել անցյալը, դասեր քաղել դրանից: Երրորդ սերունդը թեև զգում է 1915թ. իրադարձությունների առաջացած ցավը, սակայն ավելի սառնասրտորեն ու օբյեկտիվորեն է գնահատում և ճշմարիտ հետևություններ անում: Այդ է վկայում այն կազմակերպված պայքարը, որ երրորդ սերունդը մղում է իր ազգային խնդիրները լուծելու համար» [3, էջ 154]:

Շփվելով հայուհի Թերեզայի, տատի հասակակից կանանց և հայ համայնքի հետ, հաճախելով հայկական առաքելական եկեղեցի՝ Սեդան իր համար բացահայտում է իր ազգի պատմությունը, ցեղասպանությունը, որի ականատեսն էր տատը, և, իր հայկական ինքնությունը: «Ես այն ժամանակ և հիմա նրանց հայ աղջիկն եմ, – ասում է Սեդան, – տղամարդիկ ու կանայք, իրենց տխուր դժբախտությունների, ջարդերի ու ջրհեղեղների մասին երգերով, հացը հունցելով ու իրենց ոչխարներին հաշվելով, ինձ մարիոնետի նման թելերով հետ են քաշում: Գետը, այդ ավիամերձ ցավը, որ իմ մեջ է միշտ և ընդմիշտ, սկսում է բարձրանալ այնպես, ինչպես որ զգացել էր Սեդան, երբ զգեստը բարձրացել էր գլխավերևում և քարի պես ընկել պղտոր ջրի տակ...» [4, էջ 221]:

Խորհրդանշական է վեպի ավարտը՝ Սեդան և Թերեզան միասին դուղուկ են նվագում, որը փաստում է նրանց դարձը ազգային արմատներ: Նրանք գտնում են իրենց

ինքնությունը: «Այդ գիշեր երագում, – ասում է Սեդան, – տեսա Եփրատ գետի մոտ տատիկիս հետ թուրքական վայրագություններին ակնատես կանանց, որոնք պատմեցին տատիս՝ Քազարդի հոգեկան ցնցումների, նրա հիշողության մթագնման մասին: Երբ արթնացա, վերագտա տատիս մոռացված անունը՝ Կարոտ, և փոխանցեցի մորս՝ Արաքսիին» [4, էջ 225]:

«Քերոլ Էդգարյանը գրել է մի պատմություն, – գրում է Դ. Լ. Փլուշարսը, – որը ուշագրավ է իր հոգեբանական խորաթափանցությամբ և քնարական արձակի եզակի կատարելությամբ: Սեդայի ուշագրավ երգը և նրա ձեռք բերած իմաստությունը հաջորդ սերնդին ազատում է օտարացումից և վերականգնում հայ ընտանիքի արժանապատվությունն ու իմաստը: «Եփրատի մակընթացությունը» Քերոլ Էդգարյանի ապշեցուցիչ յուրօրինակ և բեկումնային հաղթանակն է: Այն կարևոր, հզոր, հուզիչ վեպ է, ուր վիպասանուհին զարմանալի տաղանդով վեր է հանում ամերիկահայերի կյանքը» [4, էջ 360]:

Քերոլ Էդգարյանը սերնդակից գրողների նման ոչ միայն ընդունեց իր նախնիների անցյալը, այլև նրանց նման պահանջատերը դարձավ Հայոց ցեղասպանության ընդունման և դատապարտման:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ելնելով ժամանակի մարտահրավերներից, մարդու օտարման խնդրից՝ Քերոլ Էդգարյանը «Եփրատի մակընթացությունը» վեպով, որպես օտարների չճշտվելու կռվան, արժևորվել է ազգային ինքնության պահպանումը՝ շեշտադրելով էթնիկական հիշողությունը, հայ ավանդական ընտանիքի ստեղծումը: Գեղարվեստական մտածողության համաձիրում գրողը շոշափել է նախնյաց ազգային դիմորոշության հիմնարար ելագծեր, մարդկությանը ներկայացրել հայ ժողովրդի դարավոր պատմությունը, ցեղասպանությունը՝ տալով դրա պատմաքաղաքական, ազգային և բարոյա-հոգեբանական գնահատականը, դառնալով ցեղասպանության դատապարտման պահանջատերը:

Գրականություն

1. Դանիելեան Ս. *Միջուկի տրոհումը, Միջուկային գրականության պատմություն*: Գիրք 1: Երևան: «Չանգակ-97» հրատ.: 2011: 407 էջ:
2. Էդոյան Հ. «Մարդու «անհետացման» իմաստաբանական գիծը Վերածննդից մինչև XX դար» // «Համատեքստ -2002» հոդվածների ժողովածու: Երևան: 2002: 6-7 էջեր:
3. Մալումյան Տ. «Հայոց ցեղասպանության հետևանքների արտացոլումը ամերիկյան գրականության մեջ» // «Բանբեր Երևանի համալսարանի»: Հ.3 (102), Երևան: 2000: 149-154 էջեր:
4. Edgarian C. *Rise the Euphrates*. Hardcover: Random house Press. 1994. 370 p.
5. Park H. "Shared national memory as intangible heritage.", *Annals of Tourism Research*". Volume 38. Issue 2. April 2011. 520 p.

R e f e r e n c e s

1. Danielian S. The Splitting of the Core, History of Diaspora Armenian Literature.[*Mijuki trohume, Spurqahay grakanutyun patmutun*]. Book 1: Yerevan: "Zangak-97" magazine. 2011. 407 p. (In Armenian)
2. Edoyan H. "The semantic line of human "disappearance" from the Renaissance to the 20th century" [*"Mardu «anhetacman» imastabanakan gitse Veratsnndic minchev XX dar"*]. "Context-2002" collection of articles". Yerevan: 2002. 6-7 pp. (In Armenian)
3. Malumyan T. "Reflection of the consequences of the Armenian Genocide in American literature" [*"Hayoc cexaspanutyun hetevanqneri artacolum amerikyun grakanutyun mej"*]. "*Banber Yerevan University" jurnal*. H.3 (102), Yerevan. 2000. 149-154 pp. (In Armenian)
4. Edgarian C. Rise the Euphrates. Hardcover: Random house Press. 1994. 370 p.
5. Park H. "Shared national memory as intangible heritage.,Annals of Tourism Research". Volume 38. Issue 2. April 2011. 520 p.

Շնորհակալ է / Принята /Received on: 19.04.2023

Գրախոսակ է / Рецензирована /Reviewed on: 02.05..2023

Հանձնակ է սույ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Նելլի Բակուրի ԳԱԼՍՏՅԱՆ՝ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան ԳԻ արտասահմանյան գրականության բաժնի հայցորդ, Երևան, ՀՀ,
էլ. հասցե՝ hasmikbakurgalstyan@mail.ru, <https://orcid.org/0009-0003-3973-4378>

Nelli Bakur GALSTYAN: applicant of the Department of Foreign Literature of Institute of Literature after M.Abeghyan of NAS, Yerevan, RA
e-mail:hasmikbakurgalstyan@mail.ru, <https://orcid.org/0009-0003-3973-4378>

Нелли Бакуровна ГАЛСТЯН: Соискатель отдела зарубежной литературы института имени М.Абегаына НАН. Ереван, РА
эл. адрес: hasmikbakurgalstyan@mail.ru, <https://orcid.org/0009-0003-3973-4378>